

# Ավտոմոբիլային մրցարշավ

## Ճարադրանք

Ավտոմոբիլային մրցարշավի կազմակերպիչները երթուղու երկայնքով տեղադրել են  $n$  տեխնիկական սպասարկման կետեր, որոնք համարակալված են 1-ից  $n$  թվերով:  $i$ -րդ սպասարկման կետում սպասարկման համար պետք է վճարել  $a_i$  գումար: Մրցարշավորդները կարող են բաց թողնել իրար հաջորդող առավելագույնը երկու կետ: Բայց առնվազն մեկ տեխնիկական սպասարկման կետից նրանք պետք է օգտվեն: Հարկավոր է հաշվել, թե մրցարշավորդները առնվազն որքան պետք է վճարեն տեխնիկական սպասարկման համար:

## Մուտքային տվյալներ

Առաջին տողում տրված է տեխնիկական սպասարկման կետերի  $n$  ( $1 \leq n \leq 1000$ ) քանակը: Հաջորդ տողում տրված են իրարից մեկական բացատանիշով անջատված  $n$  դրական ամբողջ թվեր, որոնցից յուրաքանչյուրը չի գերազանցում 100-ը:

## Ելքային տվյալներ

Պահանջվում է արտածել մեկ թիվ՝ տեխնիկական սպասարկման համար անհրաժեշտ մինիմալ գումարը:

## Օրինակ

Մուտք	Ելք
7	12
3 4 10 15 12 2 8	

## Բացատրություն

Մինիմալ գումարը ստացվում է, եթե ավտոմեքենան սպասարկվի 3-րդ կետում և 6-րդ կետում: